

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2021-2022 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

04 փետրվարի 2022թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 16-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի կազմում փոփոխություն կատարելու հարցը: Ձեկուցող՝ Ս. Վարդապետյան
2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը: Ձեկուցող՝ Ա. Դադայան
3. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի կազմում փոփոխություն կատարելու հարցը:

Հսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար ք.գ.թ. Ս. Վարդապետյանին, ով ներկաներին հաղորդեց այն մասին, որ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ուսումնական հարցերի գծով փոխտնօրեն է նշանակվել ք.գ.թ., դոցենտ Արփինե Վարդգեսի Գեոլչանյանը, իսկ

Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝
բ.գ.դ., դոցենտ Արմեն Հակոբի Մանուկյանը: Համաձայն Ֆարմացիայի
ինստիտուտի կանոնադրության (հաստատված 30.03.2017թ) նրանք պետք է
ընդգրկվեն ինստիտուտի գիտական խորհրդի կազմում՝ ի պաշտոնե անդամի
կարգավիճակով: Նա միաժամանակ տեղեկացրեց, որ քանի որ Ֆարմացիայի
ինստիտուտի գիտխորհրդի անդամ կ.գ.դ. Սուսաննա Բադալյանն իր կողմից
ղեկավարվող «Մնկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիայի» բազային
լաբորատորիայով և համապատասխան հաստիքներով տեղափոխվել է ԵՊՀ
Կենսաբանության ֆակուլտետ, ուստի նրա փոխարեն Ֆարմացիայի
ինստիտուտի գիտական խորհրդի կազմում ընտրովի անդամի
կարգավիճակով նույն ամբիոնից պետք է առաջադրել մեկ այլ թեկնածուի:
Սեփական դիմումների համաձայն Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի
կազմից դուրս են եկել նաև արտահամալսարանական անդամ Նաիրա
Բաբկենի Զիչոյանը, ուսանողներ՝ Աննա Սահակի Բարսեղյանը, Ռուբեն
Էդուրադի Իսրայելյանը, Լուսինե Սամվելի Պետրոսյանը: Անհրաժեշտ է
վերջիններիս փոխարեն ևս առաջադրել այլ անձանց թեկնածություններ:

Ելույթ ունեցան՝ Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ Ա. Հովհաննիսյանը,
Ֆարմքիմիայի և ֆարմակագնոգիայի ամբիոնի վարիչ Հ. Սիմոնյանը,
գիտքարտուղար Ա. Դադայանը, դոցենտներ Ա. Մկրտչյանը, Կ. Պետրոսյանը,
ինստիտուտի ուսանողական խորհրդի նախագահ Մարիամ Զաքարյանը:
Նրանք առաջարկեցին Ս. Բադալյանի փոխարեն գիտխորհրդի կազմում
ընտրովի անդամի կարգավիճակով դ.գ.թ. Լուսինե Յուրիկի Սահակյանի
թեկնածությունը, Նաիրա Բաբկենի Զիչոյանի փոխարեն հրավիրյալ անդամի
կարգավիճակով՝ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի տնօրեն
բ.գ.թ., դոցենտ Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանի, իսկ ուսանող անդամների
փոխարեն ուսանողական խորհուրդն առաջարկում է «Ֆարմացիա»
մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողներ Մարիամ Վարդանի Զաքարյանի,
Անուշ Գալուստի Քարամյանի և 4-րդ կուրսի ուսանողուհի Սոնա Ահարոնի
Եզրոյանի թեկնածությունները (ուսանողական խորհրդի նիստի քաղվածքը
կցվում է):

Որոշեցին՝ (բաց քվեարկությամբ) հավանություն տալ ներկայացված առաջարկներին և Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի կազմի փոփոխությունը ներկայացնել ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը:

2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ներկայումս Նազելի Չարչյանի և Լևոն Ռոտինյանի անվան անվանական կրթաթոշակ են ստանում «Ֆարմացիա» մասնագիտության մագիստրատուրայի ուսանող Ռուբեն Էդուարդի Իսրայելյանը և 4-րդ կուրսի ուսանողուհի Սոնա Ահարոնի Եգորյանը: Նա նշեց, որ Սոնա Եգորյանը գերազանց առաջադիմությամբ շարունակում է իր ուսումը, ակտիվորեն մասնակցում է ինստիտուտի ուսանողական միջոցառումներին: Ռուբեն Իսրայելյանը շարունակում է ուսումը մագիստրատուրայում, սակայն քանի որ քննաշրջանի արդյունքում վերջինս ունի բավարար գնահատական և չի մասնակցել 3 քննությունների, այդ պատճառով անհրաժեշտ է ներկայացնել մեկ այլ ուսանողի թեկնածություն՝ Նազելի Չարչյանի անվան անվանական կրթաթոշակի համար:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ Հ. Սիմոնյանը, Ա. Մկրտչյանը, Ս. Ափոյանը, ովքեր առաջարկեցին «Ֆարմացիա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Աննա Արմենի Գասպարյանի թեկնածությունը, ով գերազանց առաջադիմությամբ ուսանողուհի է ($ՄՈԳ > 19,7$), ակտիվ մասնակցում է ինստիտուտի ուսանողական միջոցառումներին:

Որոշեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

1. Շարունակել «Ֆարմացիա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Սոնա Ահարոնի Եգորյանի՝ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակը:
2. Ներկայացնել «Ֆարմացիա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Աննա Արմենի Գասպարյանին՝ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակի:

3. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտքարտուղար Ա. Դադայանին, ով ներկաներին տեղեկացրեց, որ սույն թվականի փետրվարի 1-ից մեկնարկել է «Ֆարմացիայի արդի հիմնախնդիրները» թեմայով շարունակական

մասնագիտական զարգացման դասընթացը, որը կտևի մինչև մարտի 10-ը և
կկրի շարունակական բնույթ:

Որոշեցին՝ տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝
ք.գ.թ., դոցենտ

Ս. Վարդապետյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
ք.գ.թ. , դոցենտ

Ա. Դադայան